

ՀՈՂԻ ՎԻՇՏԸ

ՄՈՒՐ ԱՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ՊԱՏՄԱԿՈՆ—ԳՐԱԿՈՆ ՎԵՐԼՈՒՇՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

IV.

Տեսնե՞ք, թէ բնական տնտեսութիւնից փողային տընտեսութեան անցնելն ինչպէս է գիւղացիութեան անկման պատճառ դառնում։

Բնական տնտեսութեան ժամանակ գիւղացին արտադրում էր ոչ թէ շուկայի, այլ իւր համար. հարկաւոր իրերի մեծ մասն ինքն էր պատրաստում ընտանիքի հետ միասին, իսկ պակասը լրացնում էր փոխանակութիւնով, որը կատարւում էր ոչ թէ փողով այլ իրերով։ Բնական տնտեսութեան ժամանակ թէ սպառման ու թէ փոխանակութեան համար գիւղացուն հարկաւոր էր միմիայն բերք. բերք շատ ունի—հարուստ է, փող չունի,—դեռ ևս ազգատ չէ. Հասկանալն է, որ բնական տնտեսութեան շըռջանում փողի պակասութիւնն երբէք չի անհանգստացնում նրան. ընդհակառակը, գիւղացին արհամարհանք է տածում դէպի փողն ու փողատէրը։ Ահա թէ ինչպէս էր մտածում այս մասին Քանարեռցի քեթխուդան։

«Տաշտումը հաց ունենամ, կարասումը՝ գինի, ջուալումն՝ ալիւր, հէրն անիծած, որ չիփ-չիփլաղ էլ ըլիմդարդ անեմ։ Օջաղս լիքը ըլի, տանս՝ բարաքեաթ։ Որդիքս՝ սալամաթ, թող օղը հազար մարդ մտնի, հազար մարդ դուս գայ, ինչ եմ հոգում. հացն Աստուծունն ա, ես էլ հետը, ով հասնի, թող ուտի։ Տէրին փառք, տեղը հլաշատ կայ, տղէքս սաղ ըլին, ջանս ապրի. Աստուած իր ստեղծած բանդի ուղղը ինչպէս կը կտրի։ Գտակս ծուռը

կղնեմ, բէֆս արամիշ կանեմ, ով թամբալ ա, թող նա դարդ անի»,¹⁾)

«Փողի բարաքեաթին էլ նալաթ, իրա կտրողին էլ կսօր ջերդ լցնես, էգուց պէտք է մատք լպստես Ոչ գիշերը քունդ ա տանում, ոչ ցերեկը՝ զարարդ, Փորացաւ ընկածի պէս մարդ չի իմանում, թէ թիքէն որ կողմովն ա գնում: Փողը որ կայ, ձեռի կէխտ է, էս որ կայ, էգուց Աստուծով մխիթարիս Մեռնիս պէտք է շներոց, գէլերոց ըլի. թէկուզ փողի համն առած, թէկուզ իր միսը կերած, կէսարը մէկ ա... Զէ, չէ, փողի սիքէն ճանաչողը ոչ հոգի ունի, ոչ հաւատ: Փողհոգ մին ա, Զարգար Պ. որ շատ փող ունի, հէնց էն ա, ինձանից մէկ թիզ բարձրացել առ լաւ ա ապրում: Նրա քօռ աչքը գիտենայ, Շատ ֆիքք անելուցը երեսը կաշին գնացել, չոփ ա դառել, քամովն էկել, փորին դէմ առել, ատամները ցիցցից մնացել, աչքերը կուլ գնացել, մէկ որ փչես, հազար տեղ գունտ ու կծիկ կըլի, մէկ որ քթին հուզ տաս, հոգին էն սհամբը կտայ:... Թուհ, մարդ իրան հոգին պէտք է ծախի, որ փողին թամահ տնիս:»²⁾

Այսպէս չի կարող դառել գիւղացին փողային տնտեսութեան շրջանում:

Փողային տնտեսութեան ժամանակ փոխանակութիւնը կատարում է փողով, այսինքն մի այնպիսի իրով, որից կարելի է անչափ հաւաքել և որը միշտ կարելի է փոխանակել մի ուրիշ իրի հետ, մինչդեռ ապրանքը կարող է սպառն չունենալ: Փողային տնտեսութեան ժամանակ գիւղացու հետ գործ ունեցողները, օրինակ՝ տէրութիւնը, հիւսնը, դարբինը և այլն, այլ ևս բերք չեն վերցնում իրքեւ հարկ կամ աշխատավարձ, այլ փող են պահանջում: Գիւղացին ուզում է ունեցած տալ, նրանք ուզում են չունեցած առնել: Բնականաբար առաջ է դալիս փող ձեռք բերելու ձգում:

1) «Աէրը Հայաստանի», եր. 57:

2) Կոյնը, եր. 56—58:

Փող ձեռք բերելու մեծ ձգտումն ստիպում է զիւղացուն իւր ու ընտանիքի ոյժը գործադրել բերք շատ արտադրելու վերայ տնային ու դաշտային շատ աշխատանքաներ ընդհատում են և աշխատանքը կենդրոնացնում այն նիւթի արտադրութեան վերայ, որ ամենից աւելի արդիւնաւէտ է, իսկ այն նիւթերը, օդինակ, բուրդ, կաշի և այլն, որոնց վերայ աշխատանք էին գործադրում և ուժական սպառման առարկայ դարձնում, այժմ վաճառւում են: Նշանակում է՝ գիւղացին այժմ ոչ միայն տէրութեանը կամ արհեստաւորին վճարելու համար փող պէտք է ունենայ, այլ և փող պէտք է վճարել այնպիսի առարկաների համար, որ առաջ ինքն էր արտադրում ու սպառում: Մեծանում է փողի կարիքը, որա հետ մեծանում է գիւղացու կախումը շուկայից:

Բնական տնտեսութեան ժամանակ գիւղացին կախում ունէր բնութիւնից: Փողային տնտեսութեան ժամանակ գիւղացին կախումն ունի թէ բնութիւնից և թէ չուկայից: Բնական տնտեսութեան ժամանակ բերք ունեցողը հարուստ էր, իսկ փող չունեցողը դեռ ևս աղքատ չէր: Փողային անտեսութեան ժամանակ, ընդհակառակը, փող չունեցողը աղքատ է, իսկ բերք ունեցողը դեռ ևս հարուստ չէ: Փողային տնտեսութեան հակասութիւնից մէկն է այս, լինել ունեօր, բայց միաժամանակ ոչ հարուստ: Գիւղացին հարուստ կը լինի այն ժամանակ, երբ բնութեան առատաձեռնութեան հետ միասին շուկայի պայմաններն ել բարեյաջող լինին: Եյսպիսի զուգագիպոթիւն սակայն յաճախ չի պատահում: ¹⁾

4) Հետեւեալ ազիւսակն աւելի կպարզէ մեր միտքը. Թէ, յիրաւի, փողային տնտեսութեան ժամանակ գիւղացու կացութիւնն — աւելի դժուարին է:

I. ԲՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.

1. Բնութիւնն առատաձեռն է, — — գիւղացին հարուստ է:
2. * * ժամատ է, — — » աղքատ է.

II. ՓՈՂԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.

1. Բնութիւնն առատաձեռն է. շուկան բարեյաջող, գիւղացին հարուստ է.
2. * * ժամատ է, * * բարեյաջող, * * աղքատ է.

«Փո՞ղ, վաղ ու վող», — սկսում է բացականչել դիւզացին, որի գոյութիւնն այժմ կախուած է շուկայից, եւ որովհետեւ արտագրող գիւղացին փողի կարիք ունենալիս մրցողների շատ լինելու. պատճառով բերքին լու գին տուող ու սպառող գտնել չի կարողանում, ուստի ստիպուած է լինում աժան վաճառելու, որով հնարաւորութիւն չի ունենում բոլոր կարիքներին բաւարարութիւն տալ և ակամայից դիմում է պարտքին Խոկ եթէ չի կամենում բերքն աժան վաճառել, պահում է յարմար ժամանակի. բայց այս դեպքումն էլ գիւղացին հարկադրուած է լինում պարտք վերցնելու Պարտքն էլ, յայտնի է, պտուող անիւ է. բաւական է, որ վիշից բռնեց. վաղ թէ ուշ քարշ է տալու ու վշրելու ամբողջ մարմինը. Հետեանքը լինում է այն, որ գիւղացին կամ դառնում պարտատիրոջ ճորտը և կամ հողից զրկուած պրոլետար:

Փողային տնտեսութիւնն ազգում է նաև հողային սեփականութեան ծաւալի վերայ. Փողի ծարաւն ստիպում է գիւղացուն, որքան կարելի է, շատ հող ցանել. Գիւղացիներն սկսում են հետզհետէ վարել «ազատ գաշտերն ու ազատ ձորերը». Զգացւում է հողի սակաւութիւն, սկսում է հողի տիրապետութեան համար մացում. Այս կռւում, ինչպէս և ամեն կռւում, յաղթանակը տանում են աշխարհիս հզօրները. Թոյլերը զրկում են հողերից և Աղայեանի բառերով ասենք, «սեփականութիւնն անցնում է ձեռքից ձեռք».

Իհարկէ, գիւղացիական մասսայի բոլոր անդամներն հաւասարապէս ենթակայ չեն այս վիճակին. Ոմանք կաւըզանում են բարեյաջող հանգամանքների շնորհիւ խուսափել անկումից ու որոշ չափով բարօր գրութիւնը պահպանել. Հարկեանների աղքատութիւնը նպաստում է նրանց

5. » առատաձեռն է. » անքարեյաջող. » աղքատ է. »
4. » ժլատ է, » անքարեյաջող, » աղքատ է:

Մինչդեռ բնական տնտեսութեան ժամանակ գիւղացու լու պայմանները յարաբերում են վատերին, ինչպէս 4: 4-ին, փողային տնտեսութեան ժամանակ յայտարարում են, ինչպէս 4: 5-ին:

Հարստութեանը՝ Այսպիսիները գիւղում հանդէս են գալիս նախ իբրև պարտատէր և ապա իբրև մեծ հողատէր:

Եւ այսպէս, երբ փողային տնտեսութիւնը ներու է մտնում դռնից, գիւղացնութիւնը դռւքս թռչում երդիկից Ռդեսեսի փայտեայ ձին պատճառ է լինում Տրոյայի կործանման:¹⁾

V.

Մուրացանի երկերը ցոյց են ատլիս, որ հայ գիւղն խկապէս ճնշում է փողային տնտեսութեան ծանրութեան տակ:

Խօսելով այն մասին, թէ ինչպէս գժուարութեամբ էր գիւղականը ապրուսած ճարում, աշխարհ տեսած ուստա Պետին աւելացնում է:

«Այ, ուրիշա ձեր քաղաքի բանը, ընտեղ փողը շիրա. Էնքանը բիրդան ոնց են հաւաքում, գիտում չեմ, միայն

4) Փողային տնտեսութիւնը վնասում է ոչ միայն գիւղացի, այլ եւ աղնուական դասակարգին; Գիւ եւս Ք. Ա. VI դարում յոյն բանատեղծներից մէկը, Թէղնիդ Սեղարացին այսպէս է բողոքում փողային տնտեսութեան յաղթանակելու դէմ:

«Մինչեւ անդամ խոյիրի, էշերի ու ժիերի միջից, ո՞վ կիրն, միշտ ջոկում ենք աղնուացեղը, եւ բոլորիս էլ ընտիր ցիզից սիրուածն է յանկալի»:

Բայց աղնուական աղամարդը տմնեւին վատ բան չի համարում վատատոնմիկին կին առնել, եթէ միայն սա իւր նիտ փող շատ է ոերում:

Կին էլ չի բաշում վատատոնմիկի ամուսին լինել. եթէ միայն ոտ հարուստ է, հարուստն աւելի սիրելի է նրան. Քան աղնուականը

Ամենին էլ փողին են պատիւ տալիս աղնուականը հասարակին է կին առնում, իսկ անտօնմիկին էլ աղնուականի ազգան. այսպէս փողը հաւասարեցրել է տոհմերը:

Էլ այսունիտեւ մի զարմանար, ո՞վ Պոլիպայի սրդիս որ մեր աղնուական քաղաքացիների տոհմը ոչնչանում է. չէ՞ որ մեղանում առարինութիւնն սկսուել է խունտ ել մոլութեան նետ: «Ա. և Մ. Կրայզ.» Руководство по истории греческой литературы, часть I, пер. С. И. Радцига. Москва, 1907, стр. 445:

էս կայ որ, մինը թէ աշխատումտ, տասը մուֆթա են ուտում, ոչ ջափա կայ, ոչ նեղութիւնն» 4)

Ուրեմն գիւղացու թշուառութեան պատճառն այն է, որ գիւղում փողը չիր չի», որովհետեւ հեշտութեամբ չեն կարողանում ձեռք բերել կար մի ժամանակ, երբ գիւղացին առանց այս «չի» էլ լի կեանք էր անցկացնում, բայց այժմ առանց նրա ոչինչ չի կարելի ճարել:

Փողային տնտեսութիւնն այնքան է զարդացել գիւղում, որ ոչ միայն տէրութեան հարկը, արհեստաւորի վարձը, դործարանային ապրանքների գինը, այլ և սերմացուի արժեքը գիւղացին փողով պէտք է վճարէ:

«Մարդը սովածա էլել, —առում է Խոջա Միրզան, —վող եմ տուել, սերմացու առել, ցանել ա հնձել ա, չորս, տարի ապրելա . . . »²⁾)

Պետրոս Կամսարեանի նկատողութեամբ, թէ ինչու խրճիթ առաստաղը ծուռ ձողերից է շինած, մինչդեռ կարելի էր լայն տաղտակներից պատրաստել, հիւրընկալ գիւղացին, Զիբուղլուի տանուտէրը, պատասխանում է,

«Եատ զորթ ես հրամայում, ազա, զորթ որ էն ձուղերի տեղ թէ տախտակ ըլնէր, շատ լաւ կըլինէր. համ խող չի թափուի, համ էլ յառիքը սիրուն կըլինէր. Համա մէ բան կայ, որ դու չես գինայ. շինականի խամար մէ մանէթը էնդըշս աժի, ինչդըշս քաղցու խամար խարիր մանէթը, էսպրդա տեղը տախտակելու խամար եռասուն մանէթ խերիք չէր գայ, համա ես էս հըմէնին չորս մանէթ եմ տուի, էն էլ անջախ եմ Շարէ»⁵⁾)

Երբ նոյն Կամսարեանը զարմանումէ որ մալականները փայտ են վառում, իսկ հայ գիւղացիները՝ աթար, ուստայ Պետին բացարտում է պատճառը:

«Երանք հարուստ են, մենք աղքատ էն վողը, որ պտի տանք փէտի, տալիս ենք մի ուրիշ պակասութենի. օրինակ մի ձի ենք առնում, որ մեզ հմար բան անի. եա-

4) Մուրացանի երկասիրութիւնները, Ա. հատոր, եր. 204:

2) Նոյնը, եր. 295.

5) Նոյնը, եր. 295:

կով ենք ձեռք բերում, որ նրա կաթով պահենք. եա չէ շորի փալասի ենք տալի, որ մեր տանեցոնց տկլորութիւնը ծածկենք, պակասութին շատ, ես ո՞ր մինն ասեմ:»¹⁾

Գիւղական մի ընտանիքի վերահաս կործանումից ազատելու, վերջնական անկումից փրկելու համար հարկաւոր է 131 ոսւրլու չափ մի գումար, բայց ամբողջ գիւղում անհնարին է գտնել այսքան փող:

«Մեր էն խեղճ Սային... Բա էրէկ չասի՝ թէ Խոջան հրաման ա բերել, որ նրա էլած չելածը ծախի: Այ, հմի պրիստաւը վէկալած էկել ա, խեղճի տունը կտրել: Քանի մարդիկ մէջ ընկան, խնդրեցին, աղաչեցին, թէ մի քիչ էլ ա մօհլաթ տայ, ասոււ, «տալ չեմ. փողս բիրէք, տուէք, պրիստաւին վեր ունեմ», գնամ. թէ չէ, ինչ ունի, չունի, պտի վեր գրեմ, ինչ կլի կնկանը շորերն էլ...»: Դէ մենք փող որդեան գտնենք էս սհաթին. Գեղականի ջանումը հալա մնացել, որ հաւաքի, տայ:»²⁾

Փողի մեծ կարիքն ստիպում է նոյնիսկ սեփական տընտեսութիւն ունեցող մարդկանց ուրիշի մօտ աշխատանք որոնել իսկ տնտեսութեան հոգուը թողնել կանանց ու երեխաների վերայ:

«Ճենքում ես,—մատնացոյց արաւ Պետին աշխատողների վերայ,—սրանք Աւանանց երեխէքն են. Հէրը մննծ տղի հետ հըն հանդումը ուրիշի հունծն աանում, թէ ինչա, կարայ մի քանի շահի տուն ըերել. ըստեղ էլ կնիկն ու աղջկերքը իշանց կալն են կալում: Զորան էլ կինարմատեն, պստիկն ա տղայ. ամա դէ դիփ էլ տղամարդի գործեն շինըմ:»³⁾

Հայ գիւղացին աքնում ու ճգնում է փող ձեռք բերելու համար. բայց մամոնան ձկան պէս լործում է նրա մատերի արանքից և ստուերի պէս փախչում նրա առաջից. Տանտալուը տեսնում է պտուղներով ճթուած սատը, սակայն իզնուր, մի փոքրիկ շարժումն, և ահա հրապուրիչ ոստը օրօրւում է բարձրում:

1) Նոյնը, եր. 184:

2) Նոյնը, ես. 245:

3) Նոյնը, եր. 282:

VI.

Փոխանակութեան զարդացումը գիւղում մեծ կարիք է առաջացրել. գիւղացիները պատրաստ են պարտք վերացնելու, ինչ պայմանով ուղում է լինի: «Գայլն ինչ կուզի, —մութը գիշեր,» — ասում է ժողովրդական առածը: Հարուստ դայլերին էլ հենց այսպիսի մութ գիշեր է հարկաւոր անզօր գառներ, յուսահատ սպառողներ գտնելու համար: Եւ խուժում են արիւնաբրուներ գիւղ. սկսում է անխիղճ վաշխառութիւնը:

«Եթէ այսօր Հասան խանի ֆարրաշները չեն սպառնում նրանց, հօ տգիտութիւնն ու խեղճութիւնը, հօ վաշխառուներն ու օրինազնցները սպառում են նրանց,» — խորհում է Կամսարեանը: ¹⁾

«Եւ սակայն որքան շատ կային այդպիսի (վաշխառուների ձեռքին գերի. (Թ. Ա.) թողնուած ու լքուած ընտանիքներ, — խորհում է տիսրութեամբ Պետրոս Կամսարեանը, որից իմանում ենք, որ վաշխի աւերածութիւնները գիւղում մեծ չափերի է հասել: ²⁾

Ուշադրութեան արժանի է ոչ միայն վաշխառութեան զոհերի քանակը, այլ և վաշխառութեան որակը:

Վաշխառութիւնը երկու տեսակ է լինում. փողով վաշխառութիւնն երբ պարտք են տալիս փող ու պիտի ստանան փող, և բնական բերքերով վաշխառութիւնն, երբ պարտք են վերցնում՝ բերքեր, որպէսզի յետոյ դարձեալ բերք վճարեն: Սխալ կլինի կարծել, թէ բերքով ու փողով վաշխառութիւնը հաւասար ազդեցութիւն են դործում. գիւղացու տնտեսութեան վրայ, ներքով վաշխառութեան

1) Նոյնը, եր. 208:

2) Նոյնը, եր. 415:

3) Նոյնը, եր. 500:

լուծըն ընդհանրապէս աւելի թեթև է գիշացու համար. եթէ տարին բարեյաջող եղաւ ու բերքն առատ, նա հեշտութեամբ կարող է պարտքն ու վաշխը վճարել. Մինչդեռ փողով վաշխառութեան ժամանակ զիւղացու՝ առատ բերք ունենալը դեռ ևս հնարաւորութիւն չէ տալիս նրան պարտքից աղատուելու. որպէզի նա աղատուի վաշխառուի ճանկերից, պէտք է թէ ընութիւնն առատաձեռն և թէ շուկան բարեյաջող լինեն. Առածներս ճիշտ է ինչպէս գիշացու, այնորէս և կալուածտաէր աղնուականի վերաբերմամբ:

Հնում շատ լաւ էին գիտակցում բերքով ու փողով վաշխառութիւնների մեծ տարբերութիւնը:

«Հին հռովմայեցի հեղինակները, — գոռում է մեծատաղանդ Բելտուիլը, — խանդակին բողոքում էին վաշխառութեան դէմ: Կատօն ցենդորի կործիքով վաշխառուն գողից երկու անդամ վատ է (հենց այսպէս էլ ասում էր ծերունին, ուղիղ երկու տնգամ): Այս խնդրում հեթանոս հեղինակների հետ բոլորովին համեմատ էին քրիստոնէական եկեղեցու հայրերը: Առկայն — նշանաւոր երկոյթ — թէ սրանք և թէ նրանք բողոքում էին փողային կապիտալի բերած տոկոսի դէմ: Իսկ բերքերով փողատուութիւններին ու սրանցից ստացուած վաշխին անհամեմատ աւելի մեղմ էին վերաբերում: Ի՞նչն էր այս տարբերութեան պատճառը: Այն, որ փողային վաշխառուական կապիտալ ստրափելի աւերածութիւններ էր գոշծում այն ժամանակուայ հասարակութեան մէջ. այն որ հենց այս կապիտալը «կորուտեան մատնեց իտալեան»:⁴⁾

4) И. Бельтовъ. «Къ вопросу о развитіи монистическаго взяда на исторію, 1906, №• 155: Фоղով վաշխառութեան հակառակ էն նաև հին ու նոր կտակարանները: Միսիթար Գօշը «Կտակառանադիր Հայոց»-ի Բ. մասի Խ2.՝ յօտուածով նոյնում արդիւում է փողով վաշխառութիւնը».

«Հին կտակարան եւ նորա յայսոսիկ միաբանին իրանց բառնալ դվաշի եւ զտոկոսի, ոչ աստ տոկոսի յիշառակելով զվաշի թողացուցանէ, զի ծայրին բառնալով ընդ նմին եւ զարմատն բառնայ: Եւ որ ինչ ի նոր կտակարան է ստան, աւելնորդ է իր դիտողաց երկրորդել, զի թէ եւ՝

վաշխը կարիքի զաւակն է, ինչպէս կարիքն է, ոյնպէս է և վաշխը, Որտեղ փողի կարիք չկայ, այնտեղ փողի վաշխառութիւն զարգանալ չի կարող, Օրինակ, Արտվեանի դիւզացին անշուշտ չեր ընկել փողով վաշխառուի ճիրանների մէջ: Խոկ որտեղ փողի կարիք կայ, փողով վաշխառութիւնը գործում է, ինչպէս բոցավառ հուրը աշնանաւին շամբի մ.ջ:

Նշանակում է՝ դիւղի աղքատութեան հիմնական պատճառը վաշխառութիւնն համարելը մեծ մոլորութիւն է: Բարդ մեքենայի շարժումների պատճառը ոչ թէ մեծ կամ փոքր անիւներն են, այլ այն ուժը—շաքին կամ ելեքտրականութեանը, որ գործում է մեքենայի մէջ, բայց չի երևում դիտողի աչքին:

Դիւղացի դասակարգի անկաման պատճառը ոչ թէ վաշխառութիւնն է, այլ փողային տնտեսութիւնը, որ փողի կարիք առաջացնելով պարարտ հող է պատրաստում փողով վաշխառութեան համար:

օրէնքն ոչ հրամայէ մեպիլ, ո՞րչափ եւս նորու եւ փոխ ասացաւ, զի անդրէն հատուցի զլուխն Արդ իրաւունք դատասանի լեցին Շերմամբ առնուլ զլուխն, եւ վաճիս լիցի՝ հատուցումն հասնդերձեալ: Ապա թէ կար իցէ փոխառողին, տացէ փոխատուին զնոյն զլուխ մնալ առ նմա զնոյն չափն եւ այդ ըստ կարի լիցի, զի Աստօնու ինքն խոկ է դատասան՝ ոչ առնուլ վաճիս եւ Տոկոսի: . . . «Միայնար Գօշի» Դատաստանագիրը Հայոց . . . Վաղարշապատ, 1880, եր. 557:

